ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

"21" հունվար 2014թ. № 3 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ 2010-2013 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԻ ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության <<Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի 2010-2013թթ. սոցիալ-տնտեսական զարգացման ծրագիրը հաստատելու մասին>> N 782-Ն որոշման և Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի 2009թ. փետրվարի 11-ի թիվ 25-Ա որոշմամբ հաստատված մոնիտորինգի և գնահատման աշխատանքային խմբի ներկայացրած Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի 2010-2013թթ. սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրի 2013թ. տարեկան աշխատանքային պլանի մոնիտորիգի և գնահատման տարեկան հաշվետվության, ո ր ո շ ու մ եմ՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի 2010-2013թթ. սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրի 2013թ. տարեկան աշխատանքային պլանի մոնիտորիգի և գնահատման տարեկան հաշվետվությունը՝ համաձայն հավելվածի:
2. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ Վ. ՀԱԿՈԲՅԱՆ

2014թ. հունվարի 21
ք. Կապան